*բանք դոցա, քանզի*[3] *մեք՝*[4] *Հայք եւ Հոռոմք*[5]*, Վիրք եւ Աղուանք, մի խոստովանութեամբ եմք հաստատեալ*[6] *ճշմարիտ հաւատով ի լաւ անդր, զոր աւանդեցին մեզ սուրբ հարքն յերիս սուրբ*[7] *ժողովսն. ո՛չ ընդունիմք զայդպիսի բանս հայհոյութեան*[8]*, այլ նզովեմք միաբան զնմանիս նորա. եւ եւս մանաւանդ, որք կցորդին*[9] *զկնի պիղծ աղանդոյն նոցա, նզովեալ եղիցի՛ն եւ ի սուրբ եկեղեցւոյ*[10] *արտաքս մերժեսցի՛ն*[11]*»:*

*Զ.*[12] *Ի սկզբան թուականութեանս Հայոց*[13] *վեցերորդ ժողով արար տէր Ներսէս*[14] *ի Դուին*[15]*, ի չորրորդ*[16] *ամի իւրոյ կաթուղիկոսութեան*[17] *եւ ի ԻԴ ամի թագաւորութեանն*[18] *Խոսրովու արքային Պարսից*[19] *եւ ի ԺԴ ամի Յուստիանոսի կայսեր: Զայս ժողով արար տէր Ներսէս հակառակ*[20] *ժողովոյն Քաղկեդոնի*[21]*, վասն զի էր ախտ պղտորման խոստովանութեան Քաղկեդոնի՝*[22] *յաճախապէս յաւելեալ եւս քան զեւս յոյժ*[23] *յոյժ երկաբնակ հաւատն: Եւ սկզբնաւորեալ տէր*[24] *Ներսէս, սահմանադրութիւնս վճիռ*[25] *տալով եւ եդեալ միաւորութիւն խոստովանութեան հաստատելով*[26]*, նախ եւ*[27] *առաջին՝ զԾննդեանն եւ զՄկրտութեանն միաւորելով յոյժ ստիպմամբ, հաստատութեամբ անխզելի եւ անորոշելի*[28] *կանոնաւ վասն երկուց բնութեանցն միաւորելով, զմիութիւն ունելով սրբեցին: Դարձեալ՝ զխաչեցարն յերիս*[29] *սրբասացութիւնս՝ ընդդէմ բաժանման նոցա վասն Քրիստոսի միաւորեալ բնութեանցն: Զի թէպէտ եւ տեսաք զնա մարդ*[30]*, այլ Աստուած էր, թէպէտ եւ*[31] *ի տկարութիւն կամաւորաբար*[32] *խո-*

---

*ջանային շիջուցանել...կապելով* (aeii$_1$m) (հինգ տող)

1 aii$_1$m *Ի՛ւ* փխ *Մի՛* (es)

2 e չիք *պատրեալ* (aii$_1$m)

3 s *խոտորիք ի բանս նոցա, զի* փխ *պատրեալ...քանզի* (aeii$_1$m)

4 e չիք *մեք* (aii$_1$ms)

5 s *ամենեքեան հաստատեալ եմք ի մի ուղիղ հաւատ՝ Յոյնք, Հայք* փխ *Հայք...Հոռոմք* (aeii$_1$m)

6 ii$_1$m *հաստատեալք* փխ *հաստատեալ* (ae)

7 aii$_1$m չիք *սուրբ* (e)

8 m *հահոյութեան*

9 m *կցորդութիւն* փխ *կցորդին* (aeii$_1$)

10 i$_1$m *եկեղեցո*

11 e *մերժեմք յեկեղեցւոյ* փխ *միաբան զնմանիս... մերժեսցի՛ն* (aii$_1$m) (չորս տող) / s *Եւ էր այս յաւուրս Զենոնի կայսեր եւ Անաստասայ ուղղափառաց* փխ *մի խոստովանութեամբ... մերժեսցի՛ն* (ութ տող)

12 ai$_1$m չիք *Զ.* (eis)

13 m *թուականութեանցս Հայոցց* փխ *թուականութեանս Հայոց* (aii$_1$) / es չիք *Ի սկզբան...Հայոց* (aii$_1$m)

14 s *Ներսէս Միջին* փխ *տէր Ներսէս* (aeii$_1$m)

15 em *Դւնի*, i *Դվունի* փխ *Դունի* (ai$_1$) (i$_1$ գրչագրում *ու*-ի վրայ նաեւ կէտանշան է դրուած եւ լուսանցքում ուղղում տուած՝ *վ* (այսինքն՝ *Դվնի*). նոյն կերպ է նաեւ ստորեւ, միւս եօթ դէպքերում, որը չենք ծանօթագրում. նոյն կերպ է նաեւ m-ում՝ սկսած յաջորդ դէպքից. անշուշտ նոյն մայր օրինակից է գալիս նաեւ i-ի արտառոց ընթերցումը, որը գրիչն այլեւս չի կրկնել)

16 e *Դ* փխ *չորրորդ*

17 ii$_1$ *կաթուղիկոսութեանն* փխ *կաթուղիկոսութեան* (m) / a *կաթուղիկոսութեան իւրոյ* փխ *իւրոյ կաթուղիկոսութեան* (ii$_1$m)

18 e չիք *իւրոյ կաթուղիկոսութեան... թագաւորութեանն* (aii$_1$m)

19 e *Պարսից արքային* փխ *արքային Պարսից* (aii$_1$m)

20 e *ժողովս հակառակ արար* փխ *ժողով արար... հակառակ* (aii$_1$m)

21 a *Քաղկեդովնի* փխ *Քաղկեդոնի* (ii$_1$)

22 a *Քաղկեդովնի* փխ *Քաղկեդոնի* (ii$_1$)

23 e *քանզի յաճախէր* փխ *վասն զի էր...յոյժ* (aii$_1$m) (երեք տող)

24 e *Իսկ* փխ *Եւ սկզբնաւորեալ տէր* (aii$_1$m)

25 i$_1$ *վիճիռ*

26 e *հաստատելով զհաւատս՝ սկզբնաւորէ* փխ *սահմանադրութիւնս...հաստատելով* (aii$_1$m) (երկու տող)

27 e չիք *եւ* (aii$_1$m)

28 aii$_1$m *անորոշաբար* փխ *անորոշելի* (e)

29 e *յերեք* փխ *յերիս* (aii$_1$m)

30 a *մարդացեալ* փխ *մարդ* (eii$_1$m)

31 e չիք *եւ* (aii$_1$m)

32 e *կամաւորապէս* փխ *կամաւորաբար* (aii$_1$m)